ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վեղարով լուսանկար «Արքին Գաւուֆ»

206-38

digitised by A.R.A.R.@

ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Զգեստաւորեալ լուսանկար «Արքին Գաւուֆ»

2001

19396ահ

206-98

digitised by A.R.A.R.@



ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Իւղաներկ դիմանկար «Սօս-Մելիք Շահնազարեանց»

digitised by A.R.A.R.@

ՀԱՆԳԻՍՏ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՅՍՈՒ ԽՈՐ ՎՇՏՈՎ ՅԱՅՏՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՍՈՅՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 7.15-ԻՆ, ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՐ ԱՌԱՆՁՆԱՏԱՆԸ, 86-ԱՄԵԱՅ ՀԱՍԱԿՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՒ ԵՒ ՇԱՆՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ ՎԱԽՃԱՆՈՒԵՑ Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹԻՒՆԸ ՇՆՈՒԵԼ Է 1908 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ (ՌՈՒՄԻՆԻԱ), ՈՐՏԵՂ ԻՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՅԵՏՈՅ 1943 Թ. ՁԵՌՆԱԴՐՈՒԵԼ Է ԿՈՒՍԱԿՐՕՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ՝ ՇԱՌԱՅԵԼՈՒ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ: 1951 Թ. ՍՏԱՑԵԼ Է ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՐՊԷՍ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ: 1955 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԸՆՏՐՈՒԵԼ ԵՒ ՕՇՈՒԵԼ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ՝ ՅԱՋՈՐԴԵԼՈՎ ԳԷՈՐԳ Զ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ:

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՈՒՐՋ ՄԷԿ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԵԾ ՆՈՒԻՐՈՒՄՈՎ ՀՈՎՈՒԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ: ԻՐ ՀՈՎՈՒԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՁՈՐՍ ՏԱՍՆԱՄԵԱԿՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐՔՈՒՍՏ ԵՒ ԱՐՏԱՔՈՒՍՏ ԲԱՐԵԶԱՐԴԵՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ, ՊԱՏՐԱՍՏԵՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԶՈՒՄ ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐ, ԱՄՐԱՊՆԴԵՑ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿԱՊԵՐԸ ՔՈՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ, ԻՐ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ ՈՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԹԵՄԵՐԻՆ, ՍԵՐՏԱՑՐԵՑ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՒ ՍՓԻՒՌՔԻ ՀԱՅ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՒ՝ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ:

1994 Թ. ՅՈՒԼԻՍԻ 28-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԴՐՍԵՒՈՐԱԾ ԱՆՁՆՈՒՐԱՑ ՆՈՒԻՐՈՒՄԻ ԵՒ ՄԱՏՈՒՑԱԾ ԲԱՑԱՌԻԿ ՇԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆԸ ՇՆՈՐՀՈՒԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՈՉՈՒՄ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՈՒԱՆ ՏԽՈՒՐ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ՍՈՒԳ՝ ՍԿՍԱԾ ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՑ:

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՅ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

18. 08. 1994
Ս. Էջմիածին

206-98

digitised by A.R.A.R.@